ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 դեկտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

171
(3021)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ՏՈՒԺՈՂ ԵՆ ԲԱՅՑ ԴԱՏԱՐԱՆ ՉԵՆ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ

Արարատի մարզի դատարանը ծանուցում է ուղարկել ՊՎԾ պետ Ռոմանոս Պետրոսյանին, ԱԺ պատգամավոր Գագիկ Մելքոնյանին, Ռուսաստանում Հայաստանի դեսպան Գուրգեն Արսենյանին, որ ներկայանան դատարան, սակայն վերջիններս չեն ներկայացել: Դատարանում բարձրացվել է նրանց բերման ենթարկելու հարցը, սակայն դատավորը մերժել է ու որոշել կրկին ՔՊ-ականներին ծանուցում ուղարկել, որ ներկայանան դատարան: Իսկ ինչ քրեական վարույթով:

Դեռեւս փետրվարի 20-ից ՔՊ գրասենյակին, ինչպես նաեւ ՔՊ պատգամավորներ Գուրգեն Արսենյանին եւ Գագիկ Մելքոնյանին պատկանող տարածքներում ռումբ տեղադրելու գործով քրեական վարույթ կա նախաձեռնված, ու գործը դատարանում է: ՀՀ քննչական կոմիտեն պարզել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներին, նրանց աջակիցներին ահաբեկելու համար 2024 թվականի փետրվարի 20-ին քաղաքացին գնացել է Երեւան քաղաքի Գյուլբենկյան 33 հասցեում գտնվող «Միավորված աշխատանքային կուսակցության» գրասենյակի մոտ եւ ժամը 03:50-ին գրասենյակից 9 մետր հեռավորության վրա գտնվող մայթեզրի ծառի տակ տեղադրել է նախապես պատրաստված, որպես պայթեցման միջոց շուրջ 1 կիլոգրամ տրոտիլ եւ պենտալիտ, ավերածություններ գործելու, մարդկանց կյանքից զրկելու, շրջակա շինություններն ամբողջությամբ ավերելու համար պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը:

Ապա նույն ժամանակահատվածում պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը տեղադրել են Գյուլբենկյան 30/3 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարածքային գրասենյակի մուտքի մոտ՝ այդ կերպ առաջացնելով պայթյունի եւ հրկիզման իրական սպառնալիք. սակայն Վ. Հ.-ի կողմից տեղադրված պայթեցման սարքերը չեն պայթել՝ ինքնաշեն պայթեցման սարքերի գործարկման մեխանիզմի հաշվարկված եղանակով չգործելու պատճառով:

Վերջիններս (Ռոմանոս Պետրոսյան, Գագիկ Մելքոնյան, Գուրգեն Արսենյան) այս գործով տուժող են ու պետք է գնան դատարան՝ ցուցմունք տալու»:

ՔՊ-ականները հենց այս գործով տուժող են, սակայն դատարան չեն ներկայանում:

«Ազգային առաջընթաց» կուսակցությունը, որը ներկայացվածություն ունի նաեւ ավագանիում, քաղաքապետ Տիգրան Ավինյանի պաշտոնանկության գործընթաց է պատրաստվում սկսել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կուսակցության ղեկավար Հայկ Գրիգորյանը ավագանու անդամների հետ քննարկումներ է անցկացնում, որպեսզի անհրաժեշտ 33 ստորագրությունները հավաքեն՝ հարցը ավագանու օրակարգ մտցնելու համար: «Ազգային առաջընթաց»-ից Պեդրո Զարոկյանը «Ժողովուրդ» օրաթերթին ասաց, որ եթե ավագանու անդամները համաձայնության գան, ապա հնարավոր է՝ տարեվերջյան նիստին հարցը օրակարգ մտնի: Բայց Ավագանու անդամները, կարծես, չեն շտապում համաձայնություն տալ: Մեզ հետ զրույցում Երեւանի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանն ասաց, որ նիստ են ունենալու եւ հարցը պետք է քննարկեն Հայկ Մարությանի հետ, միեւնույն ժամանակ շեշտեց՝ պետք է գործընթացը սկսելուց առաջ ճիշտ հաշվարկներ անել, ռեսուրսները գնահատել: Ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն էլ նշեց՝ թող նախ «Ազգային առաջընթաց» կուսակցության անդամները իրենց ներսում վերջնական որոշում կայացնեն, բոլոր անդամները միանան նախաձեռնությանը, եւ նոր դիմեն մյուս խմբակցությունների անդամներին:

Նելլի Դավթյանը հեղափոխությունից հետո «Արմենպրես» լրատվական գործակալության լրագրողից սահուն քայլերով (օրերս) դարձավ ՀՀ ՆԳՆ Միգրացիոն ծառայության պետ: Մինչ Միգրացիոն ծառայության պետ դառնալը Դավթյանը եղել է Ծառայության պետի օգնական, հանրային կապերի պատասխանատու, ապա Ծառայության պետի տեղակալ: Ներկայացնելով 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիր՝ Նելլի Դավթյանը չի հայտարարագրել սեփական անշարժ գույք, սակայն հայտարարագրել է Երեւան քաղաքի Ավան վարչական շրջանում գտնվող բնակարան, որը փաստացի իրեն չի պատկանում, սակայն 90 օրից ավելի շահագործվում է իր կողմից: Հաշվետու տարվա ընթացքում Դավթյանը ձեռք է բերել մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոց ALFA ROMEO մակնիշի, որն արժեցել է 1 մլն 925 հազար դրամ: Դավթյանը նաեւ շահագործում է սեփականության իրավունքով իրեն չպատկանող KIA մակնիշի մեքենա: Միգրացիոն ծառայության նոր պետի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 365 հազար դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է գրեթե 130 հազար դրամով: Կանխիկ դրամական միջոցները եւս ավելացել են՝ 200 հազար դրամից դառնալով 350 հազար դրամ: Դավթյանի տարեկան միակ եկամուտը եղել է աշխատանքի վարձատրություն ՀՀ ՆԳՆ Միգրացիոն ծառայությունից՝ 4 մլն 645 հազար դրամ:

Դեկտեմբերի 5-ին ՀՀ արդարադատության նախարարության ՔԿ ծառայության պետ Ամբակում Գրիգորյանը ազատվեց պաշտոնից, եւ դրանով կատարվեց ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի երազանքը: Հենց Գրիգորյանի համար Անդրանիկ Քոչարյանը դավեր նյութեց նախկին նախարար Գրիգոր Մինասյանի դեմ ու պաշտոնանկության գործընթաց սկսեց ընդդեմ Մինասյանի: Հիմա ողջ իրավապահ համակարգը սպասում է, թե ում կնշանակեն բանտապետ, որ կարողանա այդ բարդ ոլորտը կառավարել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ իրավապահ համակարգում անուններ կան, որոնցից մեկը ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ Սահակ Գրիգորյանի անունն է. շոշափվել է նաեւ ՔԿ օպերատիվ վարչության պետ Անդրանիկ Մելոյանի անունը, իսկ թե ով կլինի իրականում նոր գլխավոր բանտապետը՝ իրավապահ համակարգում շունչները պահած սպասում են:

ԶՐՈՒՅՑ

«ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է», ՍՐԲԱԶԱՆ

«Շարժումը շատ ակտիվ իր գործունեությունը ծավալում է, մարդանց հետ ենք հանդիպում, ծրագիր մշակում: Մենք ուզում ենք որոշակիացնել, հստակեցնել այն, ինչ կա մեր մտքում»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասել է Բագրատ Սրբազանը՝ խոսելով Սրբազան շարժման առաջիկա անելիքների մասին:

Բագրատ Սրբազանը նաեւ անդրադարձել է ԱԺ անկախ պատգամավոր Գեղամ Նազարյանի հայտարարությանը, թե ընդդիմության օրակարգը Նիկոլ Փաշինյանի հեռացումը չէ, ինչպես նաեւ ՔՊ-ում կատարվող վերջին իրադարձություններին, որը մանրամասն ներկայացված է «Ժողովուրդ» օրաթերթի նախորդ համարում:

Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույցի շարունակությունը.

-Սրբազան հայր, ինչպես Դուք եք նշում, որ իշխանությունն այսուհետեւ սպառված է եւ այնքան է փտած ներսից, որ թիմակիցներին աշխատանքից ազատելով, կամ կուսակցությունից հեռացնելով՝ փորձում է պարզապես փրկել քաղաքական գոյությունը, այնպես էլ իշխանությունը նշում է, որ ընդդիմությունն է արդեն սպառված՝ նշելով, որ նոր ընտրությունների դեպքում իրենք կրկին կլինեն իշխանության, իսկ ընդդիմությունը այլեւս՝ ոչ:

-Ընդդիմությունն ամբողջ ժողովուրդն է: Իրենք որպես ընդդիմություն տեսնում են քաղաքական միավորներին, սակայն ընդդիմությունը ժողովուրդն է՝ ամբողջ ժողովրդի հսկայական մասը՝ իրենց վարքին է ընդդիմություն, իրենց քաղաքականությանն է ընդդիմություն: Այն ինչ սերմանել էին ուրիշների դեմ, հիմա իրենց դեմ է դարձել: Այս ատելության հսկայական ծավալը չի կարող գոյություն ունենալ մեր կյանքում, դա փչացնում է ամեն բան: Բայց իրենք են այդ բոլորի համար պատճառ դարձել: Քայլում եմ փողոցներում, նայում եմ մարդկանց դեմքերին՝ կքած դժվարություններով, հայրենիքի կորստով, որը առանցք է դարձել կյանքի: Կա որեւէ քայլ, որ արել է իշխանությունը եւ ծառայել է այդ քայլը այս ժողովրդին:

Անցյալ օրն ասում էին՝ գնացեք դիրքերը տեսեք: Մենք պարզապես չենք ուզում այդ մասին խոսել, քանի որ սխալ է: Բայց հարցրեք մարդկանց, որոնք գնացել են զորահավաքների եւ կասեն ձեզ, թե ինչ վիճակ է իրականում:

-Սրբազան, վերջերս դիմել եք Գլխավոր շտաբի պետին եւ ասել, որ զեկուցի, թե ինչ իրավիճակ է դիրքերում:

-Ոչ: Շաբաթ օրը կխոսեմ այդ մասին: Այստեղ տեղեկությունները անվտանգային խնդիրների վերաբերյալ բազմազան են, երկրորդն իր արտահայտությունն էր՝ «ես զենքը ձեռքս չեմ առնելու գնամ սահման պահեմ», բա ինչո՞ւ ես հագել այդ հագուստը, այդ համազգեստն ինչո՞ւ է վրադ, որպես ԳԾ պետ՝ զինվորներիդ ու սպաներիդ ի՞նչ ուղերձ ես հղում: Սրա հաշիվն ո՞վ է տալու, թե՞ լրագրողներին ասեց ու անցավ:

Բացի այդ, մենք տեղեկություն ունենք, որ Կիրանցի դիմաց ադրբեջանական զորքերը զորամաս են կառուցում ու նոր ամրակայումներ են անում, եւ ոչ միայն այնտեղ:

Իհարկե, կահավորումերն ու կացարանները իր անմիջական տիրույթում չեն, սակայն նա էլ է պատասխանատու այդ ամենի համար: Առհասարակ մարտական վիճակը զորքի ինչ վիճակում է, երկրապահներն ինչ գործ ունեն դիրքերում:

-Դուք նշել եք, որ ձեր օրակարգը մեկն է՝ իշխանության հեռացում, սակայն շարժման ակտիվ մասնակիցներից մեկը՝ արդեն նախկին ընդդիմադիր պատգամավոր Գեղամ Նազարյանը նշել է. «Ով է ասում, որ մեր օրակարգում իշխանության փոփոխությունն է»:

-Գեղամ Նազարյանին ես չեմ ուզում անդրադառնալ. նա իմ ամենամեծ ցավն է: Այսքանը ասեմ, թող ինքն էլ լսի, որովհետեւ ես չեմ լսել, բայց կարծեմ Պետրոս Ղազարյանի մոտ էլ է ինչ-որ բան ասել: Չեմ անդրադառնում իրեն, սա անձնավորված հարց չէ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԻՍՐԱՅԵԼԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԲԱՐՁՐԱՑՐԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Իսրայելի Ազգային անվտանգության խորհուրդը երեք երկրների համար ճամփորդական նախազգուշացումները համապատասխանեցրել է անվտանգության նորացված գնահատականին համապատասխան:

Ճանապարհորդության նախազգուշացման մակարդակը բարձրացվել է եւ՛ Մալդիվների, եւ՛ Հայաստանի համար, իսկ Բրազիլիայի համար իջեցվել է, գրում է Ti2es of Israel-ը:

Հայաստանի համար ճամփորդության նախազգուշացումը 1-ին մակարդակից բարձրացվել է 2-րդ մակարդակի՝ «Հայաստանում իսրայելցիների/հրեաների համար ահաբեկչական տարրերի աճող սպառնալիքի լույսի ներքո», ասվում է Իսրայելի Ազգային անվտանգության ծառայության հայտարարության մեջ:

Թե ինչ «ահաբեկչական տարրերի» մասին է խոսքը, խիստ գաղտնիք է:

Մակարդակ 2-ը ճանապարհորդներին խորհուրդ է տալիս «ձեռնարկել ավելի շատ նախազգուշական միջոցներ», սակայն չի դիտվում որպես կոչ՝ ընդհանրապես խուսափել այցից կամ լքել երկիրը:

Մալդիվները զգոնության մակարդակը 2-ից բարձրացրել են 3-րդ մակարդակի՝ «կղզում ահաբեկիչների համախոհների առկայության եւ իսրայելցիների եւ հրեաների նկատմամբ աճող թշնամանքի պատճառով»:

3-րդ մակարդակի ահազանգի ներքո իսրայելցիներին խորհուրդ է տրվում խուսափել բոլոր ոչ էական ճանապարհորդություններից դեպի այդ վայր:

Իսրայելի Ազգային անվտանգության ծառայությունը նաեւ ասում է, որ իջեցրել է Բրազիլիայի համար ճանապարհորդության նախազգուշացումը մինչեւ 1 մակարդակ, բացառությամբ Բրազիլիա-Արգենտինա-Պարագվայ սահմանային տարածքի, որտեղ 2-րդ մակարդակի նախազգուշացումը կմնա ուժի մեջ:

ՓԱՇԻՆՅԱՆԵՆՔ ԴԵՄ ՉԵՆ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ. ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆ

Իհարկե, ընդդիմությունն է պատասխանատվություն կրում դրա համար. ի պատասխան հարցին, թե հերթական տարին անցավ, եւ ընդդիմադիր շարժումը եւս մեկ անգան չհասավ իր նպատակին՝ իշխանափոխություն տեղի չունեցավ, ԱԺ ճեպարույցների ժամին ասաց ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը:

«Խորհրդարանական ընդդիմությունը խորհրդարանում է իշխանափոխության օրակարգով, եւ քանի դեռ primeminister.am կայքում Նիկոլ Փաշինյանի գլխարկով կամ առանց գլխարկի նկարն է, մենք, իհարկե, ձախողել ենք»,- ասաց նա:

Միաժամանակ նշեց, որ անցնող տարում հրապարակում մի քանի անգամ տեսել է, թե ինչքան է ժողովուրդը զզված Փաշինյանի ռեժիմից:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Վրաստանի «Առաջին ալիք»-ին տված հարցազրույցում անդրադարձել է հոկտեմբերի 26-ին կայացած ընտրություններից հետո իր արած հայտարարությանը, ըստ որի՝ ընտրությունները կեղծելու տարբեր միջոցներ, այդ թվում, այսպես կոչված՝ «հայկական կարուսել» է կիրառվել:

«Ուզում եմ մեր հարեւան հայերին ասել, որ իմ ասած «հայկական կարուսել»-ում որեւէ էթնիկ համատեքստ չկա: Սա այն տերմինն է, որը ես լսել էի, երբ առաջին անգամ եկա Վրաստան, դա Շեւարդնաձեի ժամանակաշրջանն էր: Նաեւ Սաակաշվիլիի օրոք է կիրառվել: Եթե չեմ սխալվում՝ Հայաստանում կեղծման այս ձեւին «վրացական կարուսել» են կոչում: Այսպիսով, էթնիկ հարց սրա մեջ չկա», - ասել է նախագահ Զուրաբիշվիլին:

ԱՅՑ՝ ԱՄՆ

Դեկտեմբերի 5-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանդիպել է ԱՄՆ պաշտպանության քարտուղար Լլոյդ Օսթինին:

Պենտագոնում տեղի է ունեցել դիմավորման պաշտոնական արարողություն, հնչել են ՀՀ եւ ԱՄՆ պետական օրհներգերը:

Սուրեն Պապիկյանը մանրամասներ է ներկայացրել ՀՀ զինված ուժերում ընթացող բարեփոխումների վերաբերյալ եւ նշել համագործակցության առաջնային ուղղությունները, որոնք ուղղված են ինչպես ՀՀ զինված ուժերի կերպափոխման իրագործմանը, այնպես էլ ԱՄՆ զինված ուժերի հետ փոխգործակցելիության մակարդակի բարձրացմանը:

Լլոյդ Օսթինը նշել է, որ Հայաստանի պաշտպանական գերատեսչության ղեկավարի այցը պատմական է:

Հանդիպման ընթացքում քննարկվել են պաշտպանության բնագավառում Հայաստան-ԱՄՆ համագործակցությանն առնչվող հարցեր:

Լլոյդ Օսթինը նշել է, որ ԱՄՆ-ն աջակցում է Հայաստանի Հանրապետության անկախությանը, ինքնիշխանությանն ու բարեկեցությանը՝ ընդգծելով, որ երկու երկրների միջեւ համագործակցությունը շարունակում է ընդլայնվել:

Քարտուղար Օսթինը հայտնել է ԱՄՆ պատրաստակամությունը՝ ՀՀ ՋՈՒ բարեփոխումներին աջակցությունը շարունակելու հարցում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՏՔ ՈՒՆԻ

Հայաստանը կարող է պարտք ունենալ ՀԱՊԿ-ին մուծումների գծով եւ այն չվճարել երկու տարի շարունակ, իսկ այժմ պարտք կա 2024 թվականի համար, ժամկետը կլրանա 2025 թվականի վերջին: Այս մասին ՌԻԱ-ին ասել է ՌԴ ԱԳՆ ղեկավարի տեղակալ Ալեքսանդր Պանկինը:

«Հայաստանը կարող է երկու տարի չվճարել այս պարտքը: Հետագա համապատասխան որոշումներ կընդունվեն»,- զգուշացրել է Պանկինը:

Նրա խոսքով՝ «իրականում Հայաստանի պարտքը արտառոց բան չէ»:

«ՀԱՊԿ ցանկացած անդամ կարող է պարտք կուտակել: Եղել են դեպքեր, երբ այլ երկրներ ստիպված են եղել»,- պարզաբանել է ՌԴ փոխարտգործնախարարը:

ԱՌՑԱՆՑ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

Յոթնյակի (G7) երկրների առաջնորդները ծրագրում են հաջորդ շաբաթ առցանց հանդիպում անցկացնել: Այս մասին հայտնում է Ճապոնիայի հանրային հեռուստատեսությունը:

NHK հեռուստաալիքի փոխանցմամբ՝ առցանց գագաթնաժողովը նախատեսվում է անցկացնել դեկտեմբերի 13-ին: Դրան Ճապոնիայից կմասնակցի վարչապետ Շիգերու Իշիբան:

Ընդգծվում է, որ հանդիպման ժամանակ G7-ի առաջնորդները մտադիր են «հաստատել իրենց միասնությունը»՝ ԱՄՆ նոր նախագահ Դոնալդ Թրամփի երդմնակալության նախօրեին: Ակնկալվում է, որ բանակցությունների հիմնական թեմաները կլինեն իրավիճակն Ուկրաինայում եւ Մերձավոր Արեւելքում: Նշվում է նաեւ, որ G7-ի ղեկավարները կարող են քննարկել Ռուսաստանի Դաշնության եւ ԿԺԴՀ-ի դեմ լրացուցիչ պատժամիջոցներ սահմանելու հնարավորությունը:

ՀՈՒՅՍ Է ՀԱՅՏՆԵԼ, ՈՐ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ ԼՈՒՐՔ Է ԸՆԴՈՒՆԵԼ ԱԶԴԱՆՇԱՆԸ

ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովն ամերիկացի հեռուստահաղորդավար Թաքեր Կառլսոնին տված հարցազրույցում հայտարարել է, որ ԱՄՆ-ն եւ Ռուսաստանը պատերազմի մեջ չեն, ինչպես նաեւ նշել է, որ «Օրեշնիկ»-ով հարվածը եղել է ազդանշան Արեւմուտքին: Լավրովի հարցազրույցը հրապարակել է ՌԴ արտգործնախարարությունը:

«Պաշտոնապես մենք պատերազմի մեջ չենք: Ոմանք Ուկրաինայում տեղի ունեցողն անվանում են հիբրիդային պատերազմ: Ես նույնպես դա այդպես կանվանեի: Ակնհայտ է, որ ուկրաինացիներն առանց ամերիկյան զինվորականների անմիջական մասնակցության չէին կարող անել այն, ինչ անում են առաջադեմ հեռահար սպառազինություններով: Դա վտանգավոր է: Դրանում կասկած չկա»,- ասել է Լավրովը: Նա նշել է, որ Ռուսաստանը կցանկանար նորմալ հարաբերություններ ունենալ իր բոլոր հարեւանների, ընդհանրապես բոլոր երկրների, «հատկապես այնպիսի հզոր երկրի հետ, ինչպիսին ԱՄՆ-ն է»:

ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հալեպի գրավումից մի քանի օր անց գրոհայինները գրավել են Սիրիայի կենտրոնական Համա քաղաքը՝ պարտության մատնելով Սիրիայի բանակի զինվորներին: Այս մասին հաղորդում է France24 պարբերականը՝ վկայակոչելով Սիրիայի բանակի հաղորդագրությունը:

Ավելի վաղ «Հայաթ Թահրիր աշ-Շամ» իսլամիստական խմբավորման կողմից առաջնորդվող գրոհայինները հարձակվել էին քաղաքի վրա եւ կատաղի մարտերից հետո հայտարարել, որ գրավել են բանտը եւ ազատ արձակել բանտարկյալներին: Մեկ գիշեր կատաղի մարտեր մղելուց հետո գրոհայինները մի քանի ուղղություններից մտել են Համա, որից հետո փողոցային մարտերի բռնվել նախագահ Բաշար ալ Ասադի կառավարական ուժերի հետ: Դեկտեմբերի 5-ին Սիրիայի բանակը խոստովանել է, որ կորցրել է վերահսկողությունը ռազմավարական դիրք ունեցող Համա քաղաքի նկատմամբ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՀԱԼԵՊԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ ԿԺԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Հալեպում դեռեւս մնում է 10-12 հազար հայ, որոնց տարհանումը հնարավոր կլինի կազմակերպել ղատեի հնարավորության առաջացման դեպքում: Սիրիահայերի առաջին խմբի ժամանումը Հայաստան սպասվում է դեկտեմբերի 14-ին:

Երեւանի «Մեդիա կենտրոն»-ում կայացած՝ «Իրավիճակը Հալեպում. հայ համայնքի ճակատագիրը. անվտանգության մտահոգություններ եւ մարդասիրական կարիքներ» թեմայով քննարկման ընթացքում նման տեղեկություններ հրապարակեց ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հայրենադարձների ինտեգրման վարչության պետ Հովհաննես Ալեքսանյանը:

Ամփոփելով նոյեմբերի 30-ին Սիրիայի հակակառավարական ուժերի վերահսկողության ներքո անցնելուց հետո Հալեպում ներկայում տիրող իրավիճակը՝ բանախոսը հայտնեց, որ սրացմանը հաջորդած 1-2 օրերին որոշ հայ ընտանիքներ կարողացել են երկրորդական ճանապարհներով դուրս գալ քաղաքից: Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը կապ է պահպանում այդ ընտանիքների հետ, որոնց մի մասը հաստատվել է մայրաքաղաք Դամասկոսում, մյուսները՝ Լաթաքիայում եւ Քեսաբում: «Մեր տվյալներով՝ այս պահին Հալեպում կան շուրջ 10-12 հազար հայեր, որոնք հիմնականում տեղաբաշխված են երեք շրջաններում՝ Նոր Գյուղ, Ազիզիե եւ Սուլեյմանիե: Հայեր կան նաեւ այլ թաղամասերում»,- նշեց Ալեքսանյանը:

Նրա հաղորդմամբ՝ որոշակի ընդմիջումից հետո դեկտեմբերի 3-ին Հալեպի Սուրբ Աստվածածին եկեղեցում տեղի է ունեցել հայ համայնքի ներկայացուցիչների առաջին խոշոր հանրային հանդիպումը: Բերիո թեմը՝ Կիլիկիո հայոց կաթողիկոսության ֆինանսական միջնորդությամբ միջոցներ է հատկացնում քաղաքի կարիքավոր ընտանիքներին: Մյուս հաստատությունները նույնպես աստիճանաբար ծավալում են բարեգործական աշխատանքներ: Հալեպում հացի եւ ջրի պաշարների սղությամբ պայմանավորված՝ գրանցվել է գների որոշակի թանկացում:

Հովհաննես Ալեքսանյանը նշեց նաեւ, որ ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հայրենադարձների ինտեգրման վարչությունը կապ է պահպանում տեղի համայնքային հաստատությունների եւ Սիրիայում ՀՀ դեսպանատան հետ: Վերջինս եւ ՀՀ ԱԳՆ-ն թեժ գիծ են գործարկել հայրենակիցների համար: Բոլոր կառույցները հետեւում են իրադարձությունների զարգացմանը՝ պատրաստ լինելով ցանկացած պահի օգնության հասնել հալեպահայերին:«Այս պահին հնարավոր չէ տարհանում կազմակերպել եւ օժանդակություն հասցնել: Եթե հնարավորություն լինի եւ պայմանները ներեն, կարելի է դա դիտարկել, բայց այս պահին այդպիսի հնարավորություն չկա: Հալեպի օդանավակայանը եւ արդյունաբերական գոտին հիմա վերահսկում են իսլամիստական խմբավորումները: Մեծ թվով մարդկանց անվտանգ տարհանելու երաշխիք չկա»,- հայտնեց Հովհաննես Ալեքսանյանը: Նա տեղեկացրեց, որ դեկտեմբերի 14-ին նախատեսված է Դամասկոս-Երեւան չվերթ եւ վտանգից մազապուրծ եղած սիրիահայերի առաջին խումբը կհասնի Հայաստան:

«Պատրաստ ենք ցանկացած ժամի ընդունել մեր հայրենակիցներին եւ զբաղվել նրանց խնդիրներով: Նախորդ տարիներից պահպանել ենք սիրիահայերի առողջապահական անվճար պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում պատրաստ ենք դիտարկել մեր հայրենակիցների կարիքները: Նաեւ կոչ ենք անում մեր գործընկեր կազմակերպություններին իրականացնել համատեղ ծրագրեր»,- ընդգծեց վարչության պետը:Սիրիայի մեծությամբ երկրորդ եւ ամենահայաշատ քաղաքը իսլամիստ ապստամբների վերահսկողության ներքո է անցել նոյեմբերի 30-ին:

Սիրիայում Հայաստանի դեսպանությունը նշել է, որ անվտանգ տարհանման հնարավորությունն այս պահին բացակայում է: ՀՀ ԱԳ նախարարությունը ուշադրությամբ հետեւում է զարգացումներին եւ հնարավորության դեպքում կդիտարկվեն բոլոր տարբերակները:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆ–ԱԴՐԲԵՋԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱԿՈՒՂՈՒՄ ՉԵՆ

Հայաստանի ազգային ժողովի իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը վստահեցնում է՝թեեւ Հայաստան-Ադրբեջան բանակցություններում կան դժվարություններ, խնդրահարույց կետեր, սակայն բանակցությունները փակուղում չեն:

Հովհաննիսյանն այս մասին ասաց խորհրդարանական ճեպազրույցում՝ անդրադառնալով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի վերջին ագրեսիվ հայտարարություններին:

Արթուր Հովհաննիսյանը նկատեց, որ մինչեւ այս տարբեր մեկնաբանություններ են հնչել Ադրբեջանից՝ տարբեր մակարդակներով:

«Բայց դա չպետք է մեզ մոտ տպավորություն ստեղծի, թե բանակցությունները մտել են փակուղի: Ոչ, բանակցությունները շարունակվում են: Բնականաբար, բանակցություններում կան դժվարություններ, խնդրահարույց կետեր, որոնց շուրջ քննարկումներն ավելի բարդ են եւ ժամանակատար: Բայց մենք փակուղի մտնելու մասին չենք խոսում, շարունակում ենք բանակցությունները»,-ասաց պատգամավորը:

Ըստ նրա՝գլխավոր բանակցողները շարունակում են աշխատանքները Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիրը վերջնական տեսքի հասցնելու համար: Պատգամավորի վստահեցմամբ՝ գործընթաց միշտ կա, կարող են լինել դժվարություններ, բարդություններ, սակայն գործընթացը տեղի է ունենում:

Հովհաննիսյանը բանակցություններից դետալներ չհայտնեց:

Անդրադառնալով հարցին, թե արդյոք Հայաստանն այս փուլում միջնորդի կարիք չի՞ տեսնում՝ Հովհաննիսյանն ասաց. «Մենք ասել ենք, որ շարժվում ենք երկկողմ խոսակցությունների տրամաբանությամբ: Տեղի են ունեցել հանդիպումներ: Մեկ անգամ բավականին մեծ, ներկայացուցչական կազմով վարչապետն է Ալիեւի հետ ուղիղ հանդիպել: Ընդունում ենք ցանկացած գործընկերոջ աջակցությունը, որն ուղղված է տարածաշրջանում խաղաղության հաստատմանը»:

Անդրադառնալով Ադրբեջանի կողմից ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի՝ ԵԱՀԿ ԱԳ նախարարների խորհդի շրջանակում Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպման առաջարկը մերժելուն՝ պատգամավորն ասաց, որ Հայաստանը, բնականաբար, լավ չի վերաբերվում, երբ հանդիպումները մերժվում են, հանդիպումները խաղաղության գործընթացն ավելի ամրացնելու եւ առաջ տանելու համար են:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Քրեակատարողական ծառայության պետ Ամբակում Գրիգորյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը նաեւ պաշտոնից կազատի Քրեակատարողական ծառայության պետ Ամբակում Գրիգորյանին, որովհետեւ այդ հարցը նախարարության ներսում քննարկվել է, եւ կա քաղաքական իշխանության համաձայնությունը, որ Ամբակում Գրիգորյանին հրաժեշտ տան:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Արդարադատության նորանշանակ նախարար Սրբուհի Գալյանը կամաց-կամաց ազատվում է իր տեղակալներից: Նոյեմբերի 5-ին, երբ Գալյանը նշանակվեց Նախարար, մոտ երկու շաբաթ անց՝ նոյեմբերի 22-ին, պաշտոնից ազատեց նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանին. երեկ նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը լքեց պաշտոնը:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ դա դեռ սկիզբն է: Գալյանը կադրային ջարդը սկսել է իր տեղակալներից ու շարքը շարունակական է լինելու՝ իջնելով ներքեւ»:

ՎԵՆԴԵՏԱ

ՎՐԵԺ՝ ՏԱՆ ՀՐԿԻԶՄԱՆ ԵՎ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 17-ամյա տղաների սպանության դեպքով երիտասարդների են փախցնում. աղմկահարույց սպանություններն ու հետախուզվողները:

2024 թվականի մարտի 12-ին «Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»-ի ուսանող Ռաֆիկ Հովհաննիսյանի էին դաժանաբար սպանել , ինչի հետեւանքով գործով կալանավորվել էին մի խումբ երիտասարդներ եւ դեռ ավելին ըստ նախաքննական մարմնի գործով անգամ կային հետախուզվողներ:

Այս դեպքից հետո Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 17-ամյա երիտասարդի սպանության դեպքի առթիվ 5 անձի նկատմամբ քրեական հետապնդում է հայտարարվել: 4 անձ կալանավորվել է, 1 անձի նկատմամբ հետախուզում է հայտարարվել:

Դատելով պաշտոնական հաղորդագրությունից՝ 17-ամյա տղաների սպանության գործով անցնողներին թաքցնում են:

Իսկ ահա 17-ամյա տղաների սպանությունները կապված են աղջկա հարցի հետ:

Նոր Խարբերդ համայնքում 17-ամյա երիտասարդին սպանել էին աղջկան SMS հաղորդագրություն ուղարկելու հարցի շուրջ առաջացած տարաձայնության համար:

Սակայն սա դեռ վերջը չէ: Անչափահասների սպանությունների դեպքերով վենդետա է եղել:

Դեպքից օրեր անց միջադեպի մասնակիցներից մեկի՝Նոր Խարբերդ բնակավայրի բնակչի ազգականը հաղորդում է ներկայացրել, որ նոյեմբերի 12-ի ուշ երեկոյան իրեն պատկանող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի ընթացքը մի քանի մեքենաներ խոչընդոտել են, ինչի պատճառով ինքը մեքենան վարել է հակառակ ուղղությամբ: Այդ ժամանակ լսել է կրակոցի նմանվող ձայն, իսկ որոշ ժամանակ անց նկատել է, որ իր մեքենայի վրա առկա են վնասված հետքեր:

Բացի այդ, դեպքից օրեր անց հաղորդում է ստացվել նաեւ 17-ամյա երիտասարդի սպանության մեջ մեղադրվող երիտասարդներից մեկի հորից, որ 2024թ. նոյեմբերի 11-ի երեկոյան անհայտ անձը (անձինք) փորձել է հրկիզել Նոր Խարբերդ գյուղում գտնվող չբնակեցված իր տունը, սակայն այրվել է միայն տան պատուհանը:

Ավելի վաղ ՀՀ քննչական կոմիտեն տեղեկացրել էր՝ 2024 թ. նոյեմբերի 8-ին Նոր Խարբերդ բնակավայրի 17-ամյա բնակչի սպանության դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթի մասին: Նախաքննության ընթացքում ձեռնարկված քննչական եւ վարութային ծավալուն գործողությունների արդյունքում պարզվել են երիտասարդի՝ կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածք ստանալու դեպքին առնչվող կարեւոր հանգամանքներ:

Ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ծառայողների հետ համատեղ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հայտնաբերվել են վերոհիշյալ դեպքերի հետ առնչություն ունեցող ավտոմեքենաներից երկուսը եւ տեղափոխվել հատուկ պահպանվող տարածք: Մյուսները հայտնաբերելու ուղղությամբ միջոցներ են ձեռնարկվում:

Պարզվել է ողբերգական հետեւանքներով միջադեպին մասնակից շուրջ մեկ տասնյակ անձանց ինքնությունը, անհատականացվել են նրանց գործողությունները:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Նոր Խարբերդի գերեզմանատան մոտ տեղի ունեցած միջադեպի մասնակից 5 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, դատարանի որոշմամբ վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորում: Մեղադրյալներից 4-ը կալանավորվել են, մյուսի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նախաքննությունը շարունակվում է»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԵՎԱՆՈՒՄ 20–ԱՄՅԱ ԱՂՋԻԿ Է ԴԱՆԱԿԱՀԱՐՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Երեւանում 20-ամյա աղջկա դանակահարությունից:

Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝նրան դանակահարողը եղել է նախկին ընկերը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեպքի վայրում ականատես քաղաքացիները նկատել են, որ դանակահարված աղջիկը, ընկնելով գետնին, ասել է՝ «չեմ ուզում մեռնեմ, փրկեք ինձ, ես ապրել եմ ուզում»:

Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում են հայտնվել լուսանկարներ, թե ինչ դանակով են հարվածներ հասցրել 20-ամյա աղջկան ու ինչպես են իրավապահները շտապել դեպքի վայր:

Հիշեցնենք, որ shamshyan.com-ը հայտնել էր, որ դեկտեմբերի 4-ին Երեւանում կրծքավանդակին ստացած վնասվածքով ծայրահեղ ծանր վիճակում հիվանդանոց է տեղափոխվել 20-ամյա աղջիկը. նա եղել է իր ընկերոջ հետ:

ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԻՑ ԲԵՆԶԻՆ ԵՆ ԳՈՂԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հարություն Հովհաննեսի Մայիլյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ N զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 2-րդ հրաձգային վաշտի 1-ին հրաձգային դասակի հրամանատարի տեղակալ, նույն զորամասի հրամանատարի 2024 թվականի հունվարի 29-ի N 080 հրամանով 2024 թվականի փետրվարի 2-ից մինչեւ փետրվարի 16-ն ընկած ժամանակահատվածում ընդգրկված լինելով մարտական հերթապահության մեջ դիրքում՝ որպես դիրքի ավագ, ի թիվս այլնի՝ կրելով նաեւ դիրքին հատկացված դիզելային վառելիքի նպատակային եւ ճիշտ օգտագործման պատասխանատվություն եւ այդպիսով հանդիսանալով պաշտոնատար անձ, 2024 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը 18:00-ից մինչեւ 20:00-ն ընկած ժամանակահատվածում հիշյալ մարտական դիրքին հատկացված 50 լիտր դիզելային վառելիքը նախապես լցրել է պլաստմասե տարաների մեջ եւ Տավուշի մարզի Ազատամուտ գյուղի բնակիչ Սարգիս Միրզոյանի հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝դրանք տեղափոխել է նույն մարտական դիրքի հարակից տարածք, որտեղ 1 լիտրը՝ 400 ՀՀ դրամի դիմաց վաճառել է Սարգիս Միրզոյանին:

Վերջինս, տեղեկացված լինելով դիզելային վառելիքի՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու հանգամանքի մասին եւ նախապես խոստանալով ձեռք բերել՝ այն վերբեռնել է իրեն պատկանող «Օպել Կոմբո» մակնիշի 11 VV 177» հաշվառման համարանիշի ավտոմեքենան, ինչը 2024 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը 20:35-ի սահմաններում, Տավուշի մարզի Այգեհովիտ բնակավայրի վարչական տարածքում հայտնաբերվել է ՀՀ ՊՆ ՌՈ Իջեւանի բաժնի աշխատակիցների կողմից:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՇԱՌՔ

Պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Երեւան քաղաքի թիվ 1 տարածքային ստորաբաժանման զորակոչի բաժնի պետը 2024 թվականի հունիսից օգոստոսն ընկած ժամանակահատվածում երեք զինծառայողների պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու կամ զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելուն նպաստելու համար ստացել է շուրջ 9 միլիոն դրամ կաշառք:

Մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով պարզվել է, որ Բաժնի պետը Ա.Թ.-ից ստացել է 3 միլիոն 880 հազար դրամին համարժեք 10 հազար ԱՄՆ դոլար, Գ.Գ.-ից՝ 3 միլիոն 103 հազար դրամին համարժեք 8 հազար ԱՄՆ դոլար եւ Կ.Ե.-ից՝ 1 միլիոն 938 հազար դրամին համարժեք 5 հազար ԱՄՆ դոլար կաշառք:

Դատախազը 2024 թվականի սեպտեմբերի 30-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Զորակոչի բաժնի պետի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար խոշոր չափերով կաշառք ստանալը) (երեք դրվագ). վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառված կալանքը:

Դատախազը 2024 թվականի դեկտեմբերի 6-ին հաստատել է մեղադրական եզրակացությունը եւ քրեական վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Արտակ Դավթյանի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործը մտավ Հակակառուպցիոն դատարան: Գործը մակագրվել է դատավոր Աշխեն Ռուբեն Ղարսլյանին:

Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Արտակ Դավթյանը հրավիրվել է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն:

«Ազդարար» հարթակում հրապարակված հաղորդագրությունից, ՋՈՒ ԳՇ նախկին պետին պատկանող գույքի առնչությամբ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում կատարվել է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր:

Նշվում է, որ Արտակ Դավթյանը իրավունք ունի ծանոթանալ գործի նյութերին, հայտնել դիրքորոշում ու ներկայացնել հայտարարագիր:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 5-ից 6-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 146 դեպք, որից 5-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԱՐՑԱԽՅԻՆ ՈՉ ՄԻ ԸՆՏԱՆԻՔ ՏԱՎՈՒՇՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ ՉԻ ԱՊԱՀՈՎՎԵԼ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ Տավուշի մարզի խորհրդի 2024թ. հունիսի 24-ի նիստում քննարկվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների բնակապահովման ծրագիրը, հարցի զեկուցողն է եղել Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Աղաբեկ Գալստյանը: Այդ ծրագրով մինչեւ նոյեմբերի 25-ը ի՞նչ աշխատանքներ են իրականացվել, Արցախից բռնագաղթած քանի՞ ընտանիք է Տավուշում բնակարանով ապահովվել: Մարզպետարանից պատասխանել են. «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների բնակապահովման հետ կապված հարցը կարգավորվում է ՀՀ կառավարության «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը եւ Հայաստանի Հանրապետության առանձին բնակավայրերի ցանկերը հաստատելու մասին» 16 մայիսի 2024 թվականի N 710-Լ որոշմամբ»: Մարզպետի պատասխանից կարելի է եզրակացնել, որ Տավուշում արցախցի ոչ մի ընտանիք պետական աջակցությամբ բնակարանով չի ապահովվել:

Ջրհեղեղից 7 ամիս հետո մեծ վնասներ կրած գյուղացիներին ու տնտեսվարողներին պետական փոխհատուցում չի տրվել:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ 2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղից տուժած գյուղացիական տնտեսություններին, այգիների, բանջարանոցների, տնամերձերի սեփականատերերին, այլ տնտեսվարողներին ե՞րբ է ցուցաբերվելու պետության կողմից ֆինանսական աջակցություն: Մարզպետարանից պատասխանել են. «Հայաստանի Հանրապետության Լոռու եւ Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրեւներով պայմանավորված հեղեղումների պատճառով Տավուշի մարզում տուժած գյուղացիական տնտեսություններին եւ տնտեսվարողներին պատճառած վնասների հետ կապված փոխհատուցումների եւ աջակցությունների տրամադրման խնդիրները համապատասխանաբար կարգավորվում են ՀՀ կառավարության եւ 15.08.2024թ. թիվ 1264-Լ եւ 15.08.2024թ. թիվ 1301-Լ որոշումներով, որն այս պահին ընթացքի մեջ է»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՀԱԶԱՆԳ

ՆՈՐԱԾԻՆ Է ԿՅԱՆՔԻՑ ՋՐԿՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը ահազանգ է ստացել այն մասին, որ նոյեմբերի 21-ին Շիրակի մարզի «Ախուրյանի մոր եւ մանկան առողջապահության կենտրոնում» նորածնի մահվան դեպք է գրանցվել:

«Ժողովուրդ» օրաթերթին ահազանգած քաղաքացու խոսքով՝ հղիության ընթացքում ամեն բան հարթ է եղել, ոչ մի պրոբլեմ չի եղել եւ երեխան առողջ է ծնվել, սակայն երեխայի ծնվելուց հետո նկատվել է թթվածնային քաղց:

«Նոյեմբերի 21-ին հարսիկս ընդունվում է Շիրակի մարզ՝ «Ախուրյանի մոր եւ մանկան առողջապահության կենտրոն», ծննդատուն, այսինքն՝ մեր շաբաթականը նորմալ էր ու բալիկը պետք է ծնվեր: Հաջորդ օրը՝ ամսի 22-ին՝ ժամը 13:30-ին, մեր բալիկը ծնվում է: Բժիշկներն ասում են, որ ծննդաբերությունը նորմալ է անցել, ոչ մի խնդիր չկա, ամեն բան անցել է հարթ: Հղիության ընթացքը եւս հարթ է ընթացել, մենք անցել ենք 4 սքրինինգ՝ հետազոտություն ապահովության համար, հանձնել ենք գենետիկ անալիզ, որ պտուղը լիարժեք առողջ է, ոչ մի խնդիր չունի, անցել ենք դոպլեր հետազոտություն, որը նույնպես ամեն բան նորմալ է ցույց տվել:

Երեխան ծնվում է նոյեբերի 22-ին՝ 3 կգ 200 գրամ քաշով, 50 սմ հասակով. բժիշկներն ասում են, որ երեխայի հետ ամեն բան նորմալ է, ոչ մի խնդիր չկա, ունի թույլ արտահայտված թթվածնային քաղց, պետք է տեղավորեն երեխային մի երկու ժամով կուվեզի մեջ, հետո հետ վերադարձնեն: Այդ պահին այնտեղ լինում են քույրս ու մայրս, երեխային տանում են ու ցույց չեն տալիս: Երբ այդ պահին հարցնում ենք՝ կա՞ ինչ-որ առողջական խնդիր մոտ, իրենք ասում են՝ ի՞նչ եք ուզում մեզանից, ձեր երեխան լրիվ առողջ է, ի՞նչ եք ընկել այս առողջ երեխայի հետեւից, նույնիսկ հարսիս թեքվել, ասել են՝ նավսդ քաշի, աղջի՛կ ջան, էն կողմ գնա, այս երեխան առողջ երեխա է:

Հարսիկս զանգում ասում է, որ մեր առողջ երեխան ուրբաթ շաբաթ օրերին, կիրակի լուսադեմին՝ ժամը հինգին, մահացել է: Ես ինքս գնացել եմ հիվանդանոց, մանկաբույժին հարցնում եմ, թե պատճառը ո՞րն է երեխայի մահվան, ասում է՝ ես չգիտեմ, ես չգիտեմ ինչ եղավ, ես չգիտեմ ինչու եղավ: Ասում եմ՝ ի՞նչ եք արել, օգնե՞լ եք, այստե՞ղ եք եղել, մանկաբույժն էլ ասում է՝ ես հերթապահ եմ եղել, ես տանն եմ եղել: Ես ասում եմ՝ այսինքն դու հերթապահությունը թողել, գնացել ես տուն, երեխան էլ մնացել է այստեղ, ինքն էլ, թե՝ քույրն է այստեղ եղել:

Մենք գիշերը զանգել ենք ու այնպես է ստացվել, որ անընդհատ գնացել ու եկել ենք, երեխային տեսել ենք, մտել ենք այդ ինտենսիվ թերապիայի բաժանմունք, երեխայի վիճակը նորմալ է եղել, մենք հարցրել ենք անգամ պե՞տք է տեղափոխել, անհրաժեշտություն կա՞ այլ հիվանդանոց տանելու, բժիշկ բերելու, եթե դեղ է պետք, մենք դեղեր էլ կարող ենք բերել, ոչ մի խնդիր չունենք, ամեն ձեւ կարող ենք օգնել, իրենք էլ, թե՝ ի՞նչ եք ուզում, երեխան ուղղակի մի քիչ դժվար է ադապտացվում:

Հարսիկս անգամ ասել է, որ եթե չունեն համապատասխան դեղորայք, մենք օրիգինալ դեղեր կարող ենք բերել, իրենք էլ ասել են, որ մենք ձեր երեխային չենք բուժում, որ դեղեր բերեք: Երեխայի մահվան օրը ես հարցրել եմ, որ ինձ ասեն, թե պատճառը մահվան, թե ինչը կարող էր լիներ: Բժիշկը սառած կանգնում ու ասում է, որ տեղյակ չի, չգիտի՝ ինչու այդպես եղավ: Հարցրել եմ, թե ում պատասխանատվության տակ է եղել երեխան, ասում է՝ իմ, ասում եմ՝ բա ես քեզ պետք է հարցնեմ, ես ումի՞ց հարցնեմ, թե ինչու մեր երեխան չկա:

Սառած, քարացած նայում են ու խելագարի նման ասում՝ չգիտեմ, տեղյակ չեմ՝ ինչ է կատարվում: Նմանատիպ բաժանմունքներում պետք է լինի բլանկանման մի բան, որտեղ նշվում է, թե երեխան որ ժամին, ինչ հետազոտություն է անցել, ինչ է եղել: Ես մեկ ժամ անդադար պահանջել եմ ցույց տալ այն թղթերը, թե երեխային ինչ օգնություն են ցույց տվել ու ինչ վիճակ է գրանցված»,- «Ժողովուրդ» օրաթերթին պատմեց ահազանգած քաղաքացին:

Քաղաքացու խոսքով՝ նորածնի մահանալուց հետո առողջապահության կենտրոնը ոստիկանությանը չի հայտնել երեխայի մահվան մասին եւ այս մասին իրենք իմացել են երեխայի դին բերելու օրը:

«Ոստիկանություն հայտարարություն չեն տվել: Մենք գնացել ենք երեխայի դին բերելու, ու ամսի 23-ին պարզվել է, որ ոստիկանություն հայտարարություն տրված չի եղել, այսինքն՝ հիվանդանոցը ոչ մի կերպ չի արձագանքել, ոստիկանությանը տեղյակ չի պահվել, որ նման դեպք է եղել: Օրվա բուժքույրը եղել է Գրետա Ստեփանյանը, իսկ մանկաբույժը՝ Ֆաթիմա Գրիգորյանը, ում պատասխանատվության տակ էլ եղել է երեխան»:

Ահազանգած քաղաքացին նաեւ ասաց, որ նշանակված է դատաբժշկական փորձաքննություն, սակայն այն կտեւի 2-3 ամիս:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Ախուրյանի «Ախուրյանի մոր եւ մանկան առողջապահության կենտրոնի» աշխատակիցների, տնօրինության հետ, սակայն մեր զանգերը մնում են անպատասխան:

«Ժողովուրդ» օրաթերթը պատասխան ստանալու դեպքում այն կհրապարակի:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԸ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ Է

ՉԿԱՌՈՒՅՑԱՊԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՎԵՐԱԴԱՐՁՎԻ ԻՋԵՎԱՆԻՆ

2024 թվականի նոյեմբերի 25-ին Հակակոռուպցիոն դատարանը բավարարել է Գլխավոր դատախազության հայցը:

Հակակոռուպցիոն դատարանը նաեւ դադարեցրել է Իջեւանում գտնվող շուրջ 10 միլիոն շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք ունեցող 0,15 հա մակերեսով հողամասի նկատմամբ Ա.Թ.-ի եւ Ս.Չ.-ի կառուցապատման իրավունքը՝ հողամասը վերադարձնելով համայնքին:

Վճռի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Ա.Թ.-ի եւ Ս.Չ.-ի կողմից հողամասը կառուցապատման իրավունքով ձեռք բերելուց հետո այն նպատակային նշանակությամբ չի օգտագործվել:

Հիշեցնենք, որ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը 2023 թվականի դեկտեմբերի 20-ին հայց էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ պահանջելով դադարեցնել Տավուշի մարզի Իջեւան քաղաքի Անկախության 1/41 հասցեում գտնվող 0,15 հա մակերեսով հողամասի նկատմամբ Ա.Թ.-ի եւ Ս.Չ.-ի կառուցապատման իրավունքը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 5 պատահար. 8 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

Կոնվերս Բանկը հայտարարում է դրամային եւ դոլարային պարտատոմսերի հերթական տրանշերի տեղաբաշխման ավարտի մասին:

Նախատեսվածից երկու ամիս շուտ Բանկը հաջողությամբ տեղաբաշխել է 5 մլրդ ՀՀ դրամ եւ 5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսեր: Դրամային պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը 9.75% է, իսկ դոլարային պարտատոմսերինը՝ 4.5%, մարման ժամկետը՝ համապատասխանաբար 2 եւ 3 տարի, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:

Տեղաբաշխման հայտերի ավելի քան 80%-ը ներկայացվել է Converse Mobile հարթակով՝ ֆիզիկական անձ հաճախորդների կողմից:

Առաջիկայում պարտատոմսերը ցուցակման կներկայացվեն Հայաստանի ֆոնդային բորսա:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ՝ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Կառավարության որոշմամբ ժամանակավոր սահմանափակում կկիրառվի ՀՀ-ից երկաթի եւ չլեգիրված պողպատի, երկաթից կամ չլեգիրված պողպատից կիսապատրաստուկների, լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձեւերով պողպատի, զտված պղինձի եւ չմշակված պղնձային համաձուլվածքների, չմշակված ալյումինի, ալյումինի փոշիների եւ թեփուկների՝ դեպի երրորդ երկրներ արտահանման նկատմամբ: Այս մասին հայտնում են կառավարությունից:

Որոշմամբ նախատեսվում է նաեւ դեպի երրորդ երկրներ արտահանվող ապրանքների համար լիցենզավորման ընթացակարգի սահմանում:

Արդյունքում հնարավորություն կտրվի ԵԱՏՄ օրենսդրության շրջանակում՝ սահմանափակումներ կիրառել այնպիսի ապրանքների արտահանման նկատմամբ, ինչը վերամշակելով տեղում կնպաստի առավել բարձրարժեք ապրանքների արտադրությանը եւ արտահանմանը: Նախատեսվում է, որ կիրականացվեն սեւ եւ գունավոր մետաղներից նոր արտադրությունների կազմակերպման ներդրումային ծրագրեր, որի արդյունքում կարտադրվեն զգալիորեն բարձր ավելացված արժեքով արտադրանք (մասնավորապես՝ շինարարական ամրաններ, պրոֆիլներ, լարեր, մալուխներ եւ այլն), այսինքն՝ ապրանքատեսակներ, որոնք մեծ պահանջարկ ունեն Հայաստանի ներքին շուկայում, ինչպես նաեւ սեւ եւ գունավոր մետաղներից ապրանքների ներմուծման փոխարինում:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»

ՏԱՐՎԱ ԲԱՆԿ՝ The Banker ԱՄՍԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ամերիաբանկն արժանացել է Հայաստանի 2024թ. «Տարվա բանկ» մրցանակին Financial Times (FT) ընկերության համաշխարհային առաջատար ֆինանսական լրատվամիջոցի՝ The Banker ամսագրի կողմից: «Տարվա բանկ» մրցանակաբաշխության հաղթողները հայտնի են դարձել դեկտեմբերի 4-ին Լոնդոնում կայացած հանդիսավոր արարողության ժամանակ: Հեղինակավոր մրցանակը շնորհվում է բարձր արդյունքներ ցուցաբերած ֆինանսական հաստատություններին 127 երկրում, որոնք զգալի աճ են գրանցել՝ միեւնույն ժամանակ ղեկավարելով կայուն հաշվեկշիռ, բարելավելով սպասարկման որակը, ներդրումներ կատարելով տեխնոլոգիաների մեջ եւ ամրապնդելով իրենց դերը տեղական համայնքներում:

Բացի գործառնական եւ ֆինանսական ձեռքբերումներից, մրցանակակիր կազմակերպությունները գնահատվել են նաեւ հաճախորդներին առաջարկվող ծառայություններում բնապահպանական եւ սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ջանքերի համար՝ ընդգծելով յուրաքանչյուր վարկատուի հաջողության համար ցանկացած երկրում կայուն զարգացման ռազմավարության կարեւորությունը:

Որոշում կայացնելիս՝ The Banker-ի միջազգային ժյուրին նշել է, որ 2024թ.-ն առանցքային է եղել Ամերիաբանկի համար, քանի որ այն միացել է Bank of Georgia Group PLC-ին (BoGG)՝ միաժամանակ պահպանելով իր ներկայությունը շուկայում որպես ինքնուրույն կազմակերպություն՝ իր կորպորատիվ բրենդով:

Ամսագիրը նշում է, որ գործարքը ռազմավարական առավելություններ է ապահովում Ամերիաբանկի համար, այդ թվում, Միացյալ Թագավորությունում գրանցված եւ Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված BoGG-ի միջոցով ավելի բարձր հասանելիություն ստանալով միջազգային ֆինանսական շուկաներին: Աղբյուրի համաձայն, BoGG-ի մաս կազմելով, Ամերիաբանկն ավելի հեշտությամբ կկարողանա կապիտալ ներգրավել եւ ներդրումներ կատարել իր պրոդուկտների, ծառայությունների եւ տեխնոլոգիաների կատարելագործման ուղղությամբ: Ակնկալվում է, որ վերոնշյալ գործարքը նաեւ զգալի խթան կհանդիսանա ընդհանուր առմամբ Հայաստանի ֆինանսական համակարգի եւ տնտեսության զարգացման համար, ինչպես նաեւ նոր հեռանկարներ կբացի տարածաշրջանում իրականացվող նախագծերի եւ բիզնեսի համար:

Ամերիաբանկի գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը, խոսելով նշված մրցանակի մասին, ասել է. «Մեր առաջնահերթությունը հաճախորդների թվային փորձառության բարելավումն է՝ շուկայի զարգացող կարիքներին համապատասխան պատշաճ արձագանքի ու ճկունության միջոցով: Ամերիաբանկը կշարունակի ներդրումներ կատարել թվային պրոդուկտներում եւ ծառայություններում՝ ընդլայնելով նաեւ առաջարկվող ոչ ֆինանսական ծառայությունների եւ պրոդուկտների շրջանակը: Մենք ակտիվորեն ներդնում ենք էկոհամակարգային լուծումներ, որոնք թույլ կտան սպասարկել մեր հաճախորդներին ցանկացած վայրում եւ բավարարել նրանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները՝ աջակցելով վերջիններիս թե՛ առօրյա բանկային գործարքներում, թե՛ երկարաժամկետ նպատակների իրագործման ճանապարհին»:

2010թ.-ից ի վեր Ամերիաբանկը «Տարվա բանկ» մրցանակին արժանանում է ինն երորդ անգամ:

Այս ճանաչումը 2024թ. ընթացքում «Լավագույն բանկ» անվանակարգում Ամերիաբանկին շնորհված երրորդ խոշոր մրցանակն է. ընթացիկ տարում բանկը ստացել է բանկային ոլորտի համաշխարհային ամենահեղինակավոր մրցանակները, այն է՝ Euromoney պարբերականի «Գերազանցության մրցանակը» որպես լավագույն բանկը Հայաստանում, եւ Global Finance ամսագրի «Լավագույն բանկը Հայաստանում 2024թ.» մրցանակը:

Ամերիաբանկի մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո՝ Բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները:

Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Telcell-Ը ՍՏԱՑԵԼ Է ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Telcell ընկերությունը մեծապես կարեւորում է իր գործունեության անվտանգությունը եւ հենց այդ նպատակով էլ ստացել է ISO/IEC 27001:2022 հավաստագիր:

ISO/IEC 27001-ի համապատասխանությունը նշանակում է, որ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերության տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգերը համապատասխանում են ISO-ին՝ հաշվի առնելով սույն միջազգային ստանդարտում ամրագրված լավագույն փորձն ու բոլոր սկզբունքները:

Քանի որ կիբերհանցագործությունն ամբողջ աշխարհում աճում է, եւ անընդհատ ի հայտ են գալիս նոր սպառնալիքներ ու մարտահրավեր, որոնց առկայության դեպքում կիբեր ռիսկերը կառավարելը կարող է դժվար կամ նույնիսկ առաջին հայացքից անհնար թվալ, ուստի ISO/IEC 27001-ն օգնում է կազմակերպություններին գիտակցել այդ ռիսկերը, ինչպես նաեւ ակտիվորեն բացահայտել եւ լուծել թույլ կողմերը:

ISO/IEC 27001 տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը ստանդարտների շարք է, որն օգնում է պահպանել եւ կառավարել արժեքավոր տեղեկատվական ակտիվները: Լինելով միակ միջազգային համակարգը՝ այն սահմանում է տեղեկատվական անվտանգության պահանջվող չափանիշները եւ նախատեսված է ապահովելու համարժեք ու համաչափ անվտանգության վերահսկում:

ISO/IEC 27001-ը տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի (ISMS) աշխարհի ամենահայտնի ստանդարտն է: Այն սահմանում է պահանջներ, որոնք պետք է համապատասխանեն ISMS-ին:

Վերոհիշյալ համակարգը Telcell-ին կտրամադրի մեծ առավելություններ՝ տեղեկատվության պաշտպանության մեջ ներգրավված ռիսկերը բացահայտելու եւ դրանք վերացնելու կամ նվազեցնելու միջոցները որոշելու առումով, առավել եւս, որ նշված ստանդարտը ցանկացած չափի եւ գործունեության բոլոր ոլորտների ընկերություններին տրամադրում է տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի ստեղծման, ներդրման, պահպանման եւ շարունակաբար կատարելագործման ուղեցույց:

ISO/IEC 27001-ը խթանում է տեղեկատվական անվտանգության ամբողջական մոտեցումը՝ ներառյալ մարդկանց, քաղաքականության եւ տեխնոլոգիաների ստուգումը, հետեւաբար սույն ստանդարտի համաձայն ներդրված տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերության համար ռիսկերի կառավարման, կիբերդիմակայունության եւ գործառնական գերազանցության գործիք է:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՂԱՐԿՈՂ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲ Ընկերությունը հայտարարում է անվանական ոչ փաստաթղթային Կայուն զարգացման հետ կապված (ԿԶԿՊ) պարտատոմսերի վաճառքի մեկնարկի մասին: Սա նման պարտատոմսերի առաջին թողարկումն է ՀՀ կապիտալի շուկայում:

Team Telecom Armenia-ն թողարկել է Կայուն զարգացման դոլարային եւ դրամային պարտատոմսեր: Պարտատոմսի այս տեսակն ընտրելիս Ընկերությունը հիմնվել է Կայուն զարգացման իր ռազմավարական նպատակի վրա, որը ենթադրում է բիզնեսի շարունակական ընդլայնում՝ ստանձնելով շրջակա միջավայրի վրա իր գործունեության ազդեցությունը նվազեցնելու պարտավորություն:

Առաջին սերիայի դոլարային պարտատոմսերի անվանական ծավալը 45 միլիոն դոլար է, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար, արժեկտրոնային տոկոսադրույքը՝ 7.95%, շրջանառության ժամկետը՝ 60 ամիս: Երկրորդ սերիայի դոլարային պարտատոմսերի անվանական ծավալը 20 միլիոն դոլար է, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ կրկին 100 ԱՄՆ դոլար, արժեկտրոնային տոկոսադրույքը՝ 7.85%, շրջանառության ժամկետը՝ 48 ամիս:

Դրամային պարտատոմսերի անվանական ծավալը 3.9 միլիարդ դրամ է, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 հազար դրամ, արժեկտրոնային տոկոսադրույքը՝ 11.5%, շրջանառության ժամկետը՝ 60 ամիս: Բոլոր սերիաների պարտատոմսերի տեղաբաշխումը կիրականացվի 2024թ. դեկտեմբերի 5-ից 18-ը:

Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները Team Telecom Armenia-ն ուղղելու է իր ռազմավարական առանցքային ուղղությունների զարգացմանը՝ բջջային ու ֆիքսված ցանցերի, Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ենթակառուցվածքի զարգացմանը, ինչպես նաեւ վարկերի ամբողջական վերաֆինանսավորմանը:

Վերջին երկու տարիների ընթացքում միջազգային ստանդարդներին համապատասխան բնապահպանական կառավարման համակարգ ներդնելու արդյունքում Ընկերությունը էականորեն նվազեցրել է իր գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ պարտավորվելով մինչեւ 2029թ. կրճատել արտանետումները 40%-ով:

Պարտատոմսերը կարելի է ձեռք բերել առցանց՝ Ամերիաբանկի MyAmeria հավելվածի MyInvest հարթակի միջոցով, կամ այցելելով Ամերիաբանկի որեւէ մասնաճյուղ եւ լրացնելով հայտ-հանձնարարականը, կամ ուղարկելով լրացված հայտ-հանձնարարականի ձեւն Ամերիաբանկի էլ. հասցեին՝ capitalmarkets@ameriabank.am.

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2024թ. նոյեմբերի 27-ի Թիվ 1/452Ա որոշմամբ: Պարտատոմսերի տեղաբաշխողն է «Ամերիաբանկ» ՓԲ Ընկերությունը: Պարտատոմսերի ձեռքբերման կարգին, ազդագրի էլեկտրոնային տարբերակին եւ պարտատոմսերի հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարություններին կարելի է ծանոթանալ այստեղ: Թողարկողի եւ առաջարկվող պարտատոմսերի բոլոր մանրամասները, ինչպես նաեւ դրանց առնչվող ռիսկերը ներկայացված են ծրագրային ազդագրում:

Team Telecom Armenia-ի մասին

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Teaշ-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԿՍՏԵՂԾՎԻ «ՏԱՓԻ ԲԵՐԴ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ

Գործադիրի որոշմամբ կստեղծվի «Տափի բերդ» պատմամշակութային արգելոց, որը հանդիսանում է հանրապետական նշանակության հուշարձան եւ ընդգրկված է պետական ցուցակում:

Ըստ հիմնավորման՝ արգելոցների ստեղծումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը եւ զբոսաշրջիկների թվի աճին: Ներկայումս հիշյալ հուշարձանի տարածքներում բացակայում են անհրաժեշտ ենթակառուցվածքները, եւ շատերը չեն այցելում այդ վայրեր:

Արգելոցների ստեղծմամբ հնարավորություն կստեղծվի իրականացնել կրթական, գիտատեղեկատվական, մշակութային գործունեություն, նաեւ արգելոցի ստեղծման արդյունքում ստեղծվելու են ենթակառուցվածքներ, բարեկարգվելու է տարածքը, տեղադրվելու է տոմսային տնտեսություն, աշխատելու է մշտական պահակ, անցկացվելու է լուսավորություն: Արգելոցի ստեղծման արդյունքում համայնքի ազգաբնակչությունը կարողանալու է իրացնել իր իսկ պատրաստած հուշանվերային արտադրանքը եւ ստանալ լրացուցիչ եկամուտ:

Բացի դրանից՝ հուշարձանների մեծ մասն ընդգրկված չէ զբոսաշրջային երթուղիներում, ուստի արգելոցների ստեղծման պարագայում իրականացվում է հանրահռչակման աշխատանքներ եւ դրանք ընդգրկվելու են զբոսաշրջային երթուղիներում: Մշակութային զբոսաշրջության կայուն զարգացման եւ զբոսաշրջային արդյունքի որակի շարունակական ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել եւ զարգացնել ոլորտը սպասարկող ենթակառուցվածքներ, որոնք կդառնան նոր ուղղություններ:

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԸ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ Է ՍԿՍԵԼ

«Գոյ» թատրոնը հայտարարություն է տարածել, որում ասվում է. «Գոյ» թատրոնը կանգնած է ոչընչացման վտանգի առաջ:

Թատրոնը տարիներ շարունակ եղել է լաբորատոր - փորձարարական արվեստի կարեւոր կենտրոն՝ դառնալով բազմաթիվ դերասանների, ռեժիսորների եւ այլ ստեղծագործողների համար ինքնարտահայտման հարթակ: Մենք չենք կարող թույլ տալ կորցնել այս արժեքավոր մշակութային օջախը:

Ձեր աջակցությունը կարող է փոխել իրավիճակը: Մշակույթի պաշտպանությունը յուրաքանչյուրիս պարտքն է»,- ասված է հայտարարության մեջ:

ՄԱՐԶԱԿԱՆ

12 ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ՝ ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արագ եւ կայծակնային շախմատի աշխարհի առաջնությունում Հայաստանը կունենա 12 մասնակից:

Տղամարդկանցից հանդես կգան Ջավեն Անդրիասյանը, Կարեն Գրիգորյանը, Հայկ Մարտիրոսյանը, Տիգրան Պետրոսյանը, Շանթ Սարգսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Արամ Հակոբյանը եւ Էմին Օհանյանը:

Կանանց մրցաշարին կմասնակցեն Աննա Սարգսյանը, Լիլիթ Մկրտչյանը, Էլինա Դանիելյանը եւ Մարիամ Մկրտչյանը:

Արագ եւ կայծակնային շախմատի աշխարհի առաջնությունը կկայանա դեկտեմբերի 26-28-ը Նյու Յորքում:

ՍՊԵՐՑՅԱՆԸ, ՀՆԱՐԱՎՈՐ Է, ՏԵՂԱՓՈԽՎԻ ՊՍԺ

Ռուսական «Կրասնոդարի» կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը հնարավոր է՝ տեղափոխվի ֆրանսիական ՊՍԺ, հայտնում է «ԷՌԲԷ ՍՊՈՐՏ»-ը:

Աղբյուրի համաձայն՝ փարիզյան ակումբը 24-ամյա ֆուտբոլիստի համար պատրաստ է վճարել 20 միլիոն եվրո, սակայն «Կրասնոդարի» սեփականատեր Սերգեյ Գալիցկին չի ցանկանում ձմեռային տրանսֆերային պատուհանի ընթացքում զրկվել թիմի առաջատարից:

Էդուարդ Սպերցյանը «Կրասնոդարի» սան է եւ մինչեւ 2026 թ. հունիսի 30-ը պայմանագիր ունի ակումբի հետ:

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Ավարտվել է շախմատի տղամարդկանց Հայաստանի առաջին խմբի 85-րդ առաջնությունը:

Առաջին տեղը 8,5 միավորով զբաղեցրել է ՖԻԴԵ-ի վարպետ Սարգիս Սարգսյանը: 7,5 միավորով երկրորդ մրցանակակիր է դարձել գրոսմայստեր Մամիկոն Ղարիբյանը, իսկ եռյակը եզրափակել է ՖԻԴԵ-ի վարպետ Բենիկ Ագասարովը՝ 6,5 միավորով:

● Դեկտեմբերի 11-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Ինչ տարբերություն, թե ում հետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են հողամասերի ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքները:

Սարիբեկ Սեդրակյան (59 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու կամ մի քանի անձանց մոտ սեփականության, օգտագործման ներքո գտնվող հողամասը նրանց է պատկանում համապատասխանաբար՝ ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքով:

Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքը ծագում է երկու կամ մի քանի անձանց սեփականության իրավունքով այն հողամասն անցնելիս, որը չի կարող բաժանվել առանց դրա նպատակային նշանակության փոփոխման կամ օրենքի ուժով ենթակա չէ բաժանման, ինչպես նաեւ սեփականատերերի կողմից իրենց պատկանող հողամասերը կամովին՝ պայմանագրի հիման վրա մեկ հողամասում միավորելիս:

Օրենքներով եւ այլ իրավական ակտերով, հողաշինարարական եւ քաղաքաշինական փաստաթղթերով սահմանվում են հողամասերի նվազագույն չափերը, որոնցից ցածր չի թույլատրվում ընդհանուր սեփականությունից առանձնացնել հողամասեր (ըստ օրենքի՝ անբաժանելի հողամասեր):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սեփականատերերից մեկին պատկանող շենքի, շինության վերակառուցումը չի հանգեցնում ընդհանուր հողամասում նրա բաժնի մեծացմանը՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողների իրավունքները:

Նելլի Սաղաթելյան 19 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու եւ նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ:

Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում, ինչպես նաեւ նրանց մայրությունը եւ (կամ) հայրությունը որոշելիս ծնողները ամուսնության տարիքը լրանալուց հետո կարող են ինքնուրույն իրականացնել ծնողական իրավունքները:

Մինչեւ անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Երեխայի խնամակալի եւ անչափահաս ծնողների միջեւ առաջացած տարաձայնությունները կարգավորում է խնամակալության եւ հոգաբարձության մարմինը:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը եւ մայրությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Միքայել Պողոսյանը նշանակվել է Հայաստանի բասկետբոլի մինչեւ 16 տարեկանների հավաքականի գլխավոր մարզիչ՝ նախապատրաստվելու 2025 թվականի ամռանը կայանալիք Եվրոպայի C դիվիզիոնի առաջնությանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9 -1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
Լոռի	- 4 - 8 +1 + 4
Տավուշ	0 - 4 +3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

Արարատ	0 - 4 +6 + 8
Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Երեւան	0 - 2 + 2 + 4

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*